

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



Մարզկենտրոնը՝
ք. Վանաձոր

Տարածաշրջանները՝
Մայիտակ,
Ստեփանավան,
Տաշիր,
Թումանյան,
Գուգարք

Քաղաքները՝
Վանաձոր,
Մայիտակ,
Ստեփանավան, Ալավերդի,
Տաշիր,
Ախթալա,
Թումանյան,
Շամլուղ

Տարածքը	3 799 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	12.8 %
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Քաղաքներ	8
Գյուղեր	122
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	234.7 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	137.2 հազ. մարդ
գյուղական	97.5 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	7.8 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	251 154.6 հա
<i>այդ թվում՝ վարելահողեր</i>	42 075.0 հա

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3 101 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը *գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության* ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի *արտադրությունները:*

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2012թ. *մարզի տնտեսության* հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն` 7.2 %,
- գյուղատնտեսություն` 6.8 %,
- շինարարություն` 2.8 %,
- մանրածախ առևտուր` 1.7 %,
- ծառայություններ` 1.5 %:

Վանաձոր քաղաքը (2012թ. տարեվերջին` 85.7 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագուս լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով` 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշ ընդհատումներով գործում է քաղաքի **քիմիական համալիրը**: Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Սպիտակ քաղաքը (2012թ. տարեվերջին` 12.9 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 95 կմ է) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 95 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1 400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Սպիտակ քաղաքը մինչև 1988թ. **արդյունաբերական** կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական որոշ ձեռնարկություններ, բնակչության հիմնական մասն զբաղվածությունն է գտնում գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2012թ. տարեվերջին` 13.1 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1 666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1 375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից` 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2012թ. տարեվերջին` 7.7 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.` որպես ռուսական արքայավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան - Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից` 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են **կաթի վերամշակմամբ** զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Ալավերդի քաղաքը (2012թ. տարեվերջին` 13.3 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից` 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրու-


թյունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

Ախթալա քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 2.1 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 1.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամլուղ քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 0.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ԽՄԲԵՐԻ, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ
%



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը այդ թվում՝	1 158	1 184	1 142	1 145	1 103
խանութներ	326	366	323	318	315
կրպակներ	765	749	750	757	721
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական սպորանքների շուկաներ	4	4	3	3	3
առևտրի այլ օբյեկտներ	61	63	64	65	62

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Պետական նախադպրոցական	53	55	57	59	61
Պետական հանրակրթական	167	167	167	167	167
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	23	22	22	21	22
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	1	4	4	4	4
Պետական միջին մասնագիտական ուսումնական	9	9	9	8	8
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	2	2
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	2	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Վանաձոր	ք. Վանաձոր	85 672
Ալավերդի	ք. Ալավերդի	13 927
	գ. Ակներ	
Ախթալա	ք. Ախթալա	2 101
	գ. Առողջարանին կից	
Թումանյան	ք. Թումանյան	1 733
	գ. Քոբեր կայարանի	
Շամլուղ	ք. Շամլուղ	770
	գ. Ախթալա	
	գ. Բենդիկ	
Սպիտակ	ք. Սպիտակ	12 968
Ստեփանավան	ք. Ստեփանավան	13 432
	գ. Արմանիս	
Տաշիր	ք. Տաշիր	7 746

ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ³
1	Ագարակ		1 252
2	Ազնվաձոր		394
3	Աթան		220
4	Ահնիձոր		170
5	Ամրակից		557

¹ Այստեղ և հետայսու՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² ՀՀ Արարատի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. արդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

³ ՀՀ Արարատի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2013թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ³
6	Այգեհատ		205
7	Անտառամուտ		298
8	Անտառաշեն		241
9	Ապավեն		135
10	Արդվի		230
11	Արծնի		300
12	Արջուտ	•Արջուտ •Արջուտ կալարանին կից	1 426
13	Արևածագ		737
14	Արևաշող		2 748
15	Աքորի		2 712
16	Բագում		1 373
17	Բլագոդարնոյե		210
18	Բովաձոր		301
19	Գարգառ		1 342
20	Գեղասար		949
21	Գյուլագարակ		2 493
22	Գոգարան		1 468
23	Գուգարք		7 011
24	Դաշտաղեմ		111
25	Դարպաս		2 018
26	Դեբետ		808
27	Դսեղ		2 305
28	Եղեգնուտ		855
29	Թեղուտ		790
30	Լեջան		1 016
31	Լեռնահովիտ		1 290
32	Լեռնանցք		1 545
33	Լեռնապատ		2 350
34	Լեռնավան		1 594
35	Լերմոնտովո		1 023
36	Լոռի բերդ		378
37	Լորուտ		1 012
38	Լուսաղբյուր		1 151
39	Խնկոյան		364
40	Ծաթեր		281
41	Ծաղկաբեր		1 402
42	Ծաղկաշատ		223
43	Կաթնաղբյուր		989
44	Կաթնաջուր		2 028
45	Կաթնատատ		1 037
46	Կաճաճկուտ		399
47	Կարմիր Աղեկ		171
48	Կողես		394
49	Կուրթան		2 032
50	Հագվի		508
51	Հալավար	• Հալավար • Գյուլտուրաս • Հայդարլի • Քիլիսա	137
52	Հաղպատ		787
53	Հարթագյուղ		1 372
54	Հոբարձի		840
55	Հովնանաձոր		91
56	Ձյունաշող		165

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ³
57	Ձորագետ		264
58	Ձորագյուղ		242
59	Ձորամուտ	• Ձորամուտ • Գոգավան	298
60	Ղուրսալ		544
61	Ճոճկան		2 136
62	Մարգահովիտ		3 848
63	Մարց		590
64	Մեղովկա	• Մեղովկա • Կրուցյայա շիշկա	458
65	Մեծ Այրում	• Մեծ Այրում • Փոքր Այրում	1 176
66	Մեծավան		5 691
67	Մեծ Պարնի		2 040
68	Մեղվահովիտ	• Մեղվահովիտ • Նորամուտ	260
69	Միխայելովկա		770
70	Մդարթ		431
71	Յադդան		72
72	Նեղոց		347
73	Նովոսելցովո		195
74	Նորաշեն		1 223
75	Նոր Խաչակասպ		651
76	Շահումյան		3 024
77	Շամուտ		207
78	Շենավան		517
79	Շիրականուտ		2 497
80	Շնող		3 127
81	Չկալով		190
82	Պաղաղբյուր		151
83	Պետրովկա		213
84	Պրիվոլնոյե		1 053
85	Պուշկինո		249
86	Ջիլիգա		107
87	Ջրաշեն		3 654
88	Սարալանջ		190
89	Սարահարթ		1 328
90	Սարամեջ		1 802
91	Սարատովկա	• Սարատովկա • Գետավան	416
92	Սարչապետ		2 156
93	Սվերդլով		1 058
94	Վահագնաձոր		292
95	Վահագնի		1 159
96	Վարդարլուր		1 372
97	Ուրուտ		985
98	Ուրասար		418
99	Փամբակ	• Փամբակ • Փամբակ կայարանին կից	394
100	Քարաբերդ		83
101	Քարաձոր		456
102	Քարինջ		669
103	Քարկոփ		410
104	Օձուն	• Օձուն • Ամոց	5 311
105	Ֆիդլետովո		1 534

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2012թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 262	4 738
Ծնվածներ, մարդ	142	65	77
Մահացածներ, մարդ	120	59	61
Ամուսնություններ	56	X	X
Ամուսնալուծություններ	18	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	38.4	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	171	82	89
հանրակրթական	1 349	651	698
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	94	65	29
նախնական մասնագիտական (արհեստագործական)	24	4	20
միջին մասնագիտական	94	53	41
բարձրագույն մասնագիտական	163	97	66
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	37 736
Մարզիկներ, մարդ	145	21	124
Զբաղվածներ, մարդ	4 499	2 441	2 058
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	161	138	23
բժիշկներ	21
միջին բուժանձնակազմ	52
Գործազուրկներ, մարդ	1 110	595	515
Մոցիպական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2 151
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	886	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	23 188
թատրոն	1 323
համերգ	914
թանգարան	1 054
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	50	X	X
այդ թվում՝ նչ մեծ ծանրության	32	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: